ԱԶԳԱՅԻՆ-ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Մուշեղ Լալայան[*]

Ազգայինի և համամարդկայինի մեր ընկալումը

Բնության բազմազանությունը, տեսակավորումը գոյություն ունեն ի սկզբանե: Ինքնին վերացական մարդկություն գոյություն չունի. մարդկությունը կազմում են ազգերը, և ամեն մարդ իր ազգությամբ մտնում է ընդհանուր մարդկության մեջ: Յուրաքանչյուր ազգ իր հոգեկերտվածքով ինքնատիպ է և անկրկնելի: Մարդկությունը հարուստ է ազգերով, և որևէ ազգի կորստով այն աղքատանում է՝ կորցնելով զգալու, մտածելու և արտահայտվելու մի յուրահատուկ բնական ձև, մի առանձին հոգեաշխարհ: Հետևաբար, *այն, ինչ ուղղված է ազգայինի դեմ, ուղղված է մարդկության դեմ:*

Անշուշտ, ազգային ինքնատիպությունը չի ենթադրում աշխարհից մեկուսացում կամ ազգային եսականություն: Ազգերը, բացի առանձնահատկություններից, ունեն նաև ընդհանրական հատկանիշներ: Դրանք ակնառու են Աստծո հետ հարաբերությունները ճշտելիս (պատահական չի ասված, թե բոլոր ճշմարիտ կրոնները տանում են դեպի միևնույն Աստված), ինչպես նաև՝ հասարակարգերի, տնտեսաձևերի և գիտության հանդեպ մոտեցումներում: Սակայն այս բոլորն էլ իրենց վրա այս կամ այն չափով կրում են տվյալ ազգի կնիքը: Ըստ այդմ, յուրաքանչյուր ազգ ունի ի՛ր քրիստոնեությունը

[*] ՀՀԿ փոխնախագահ:

կամ ի՛ր սոցիալիզմը, կարելի է ավելացնել նաև՝ իրե՛ն հատուկ լիբերալիզմը, ի՛ր ընկալումներին համապատասխան դեմոկրատիան նն:

Այսպիսով, թեև բոլոր ազգերը՝ իբրև Արարչի ծնունդ, Հավերժի և Բացարձակի հարթության մեջ մերձենում են, սակայն *յուրաքանչյուրն ունի դեպի Արարիչ տանող ի՛ր ճանապարհը, իսկ ավելի ստույգ՝ իրե՛ն տրված ճանապարհը:* Սա՛ է ազգերի ներդաշնակ գոյակցության բնական-արարչական կարգը: Դա ասել է նաև, թե յուրաքանչյուր ազգային միայն կատարելության ճանապարհով է դառնում համամարդկային:

Ազգերի մշակութային մերձեցում (բայց ո՛չ ձուլում), գիտատեխնիկական, տնտեսական միավորում (և ո՛չ մեկուսացում), այսինքն՝ *հոգևոր-մշակութային ինքնատիպություն և քաղաքակրթական ընդհանրություն.* այսպես ենք մենք հասկանում աշխարհի բնական կարգը, այսպիսին է ազգայինի և համամարդկայինի մեր ընկալումը:

Մեր պահպանողականությունը

Ընդհանրապես, «պահպանողականություն» ասել է մարդկության (ավելի շուտ՝ նրա ընտրանու) կողմից դրականորեն գնահատված և պատմականորեն արդարացված հիմնարար արժեքների, բարոյական նորմերի պահպանում:

Միաժամանակ, պետք է ասել, որ պահպանողականությունը ո՛չ թե առհասարակ հնի, այլ՝ հավերժի հաստատումն է: Այն ո՛չ թե անցյալի, այլ մնայունի պաշտպանն է. այն արժեքավորի, որ ստեղծվել է անցյալում և ստեղծվելու է ապագայում: Այս առումով, պահպանողականությունը ո՛չ միայն անցյալապաշտություն չէ, այլև՝ ապագայատենչ է, քանզի հավատում է պատմության անխզելիությանը, ժամանակների կապին, որով՝ հավիտենական արժեքների անդադար արարմանը:

Ու թեև ժամանակակից աշխարհում չկա պահպանողականության միասնական ընկալում և կան պահպանողական տարբեր հոսանքներ, այդուհանդերձ, կան առանցքային հասկացություններ,

ընդհանրական սկզբունքներ, դրույթներ, որ բնորոշ են «պահպանողականություն» երևույթին առհասարակ: Ըստ այդմ, պահպանողական աշխարհընկալմանը բնորոշ են՝

Հավատն առ Աստված ու նրա պատվիրանները:

Նախապատվություն տալը մնայունին, հավիտենականին (հայրենիք, ընտանիք և այլն) ՝ *ի հաշիվ անցողիկի, ժամանակավորի* (պետության կառավարման այս կամ այն ձևը, հասարակության կազմակերպման որոշ մոդել և այլն):

Մտածելակերպի կոնկրետությունը՝ համեմատ վերացականությունների. Վերացական մտային կառուցվածքները, կատարյալ թվացող տեսական սխեմաները խորթ են պահպանողականությանը:

Ավանդական (ազգային, կրոնական) *արժեքների հանդեպ նախանձախնդրությունը:*

Ապադասակարգային բնույթը:

Հատկանշական է դասական պահպանողականության այն հիմնարար մոտեցումը, թե *հասարակության բարելավումը պետք է իրականացվի մասնակի և փուլային բարեփոխումների ճանապարհով, և ցանկացած բարեփոխում պետք է համապատասխանի հասարակության ավանդական արժեհամակարգին:* Ըստ այդմ, պահպանողականությունը սկզբունքորեն մերժում է հեղափոխականությունը, քանզի այն խախտում է հասարակական կյանքի բնականոն զարգացման ընթացքը: Պահպանողականության խնդիրն է՝ *բարեփոխումների միջոցով կանխել հեղափոխական իրավիճակները:*

Պահպանողական արժեհամակարգում առանցքային տեղ ունեն հետևյալ հիմնական հասկացությունները.

Ավանդական ընտանիք: Պահպանողականները բացասական վերաբերմունք ունեն պաշտոնապես չգրանցված զույգերի, միասեռական զույգերի, մանավանդ վերջիններիս պաշտոնապես գրանցելու և երեխաներ որդեգրելու իրավունքի նկատմամբ: Պահպանողականությունն ընդունում և արժևորում է միայն «դասական» ընտանիքը:

Կրոնական կյանք: Պահպանողականներն ընդունում են տվյալ հասարակության մեջ ավանդավորված կրոնական կյանքի նորմերը և սովորույթները՝ դրանց հետևելը համարելով առողջ քաղաքական ու հասարակական կյանքի կարևոր նախապայման: Նրանք բացասական վերաբերմունք ունեն տարբեր տեսակի աղանդների նկատմամբ:

Բարոյական նորմերի հաստատուն համակարգ: Պահպանողականները հավատում են, որ գոյություն ունի Աստծո կողմից մարդուն տրված բարոյական նորմերի հաստատուն համակարգ, որին հետևելը ինչպես անհատի, այնպես էլ հասարակության սրբազան պարտքն է, և որից շեղվելու դեպքում՝ խախտվում է աշխարհի ներդաշնակ կարգը:

Պահպանողականության հիմնարար արժեքներից են նաև *մասնավոր սեփականությունը և տնտեսական ազատականությունը:*

Իսկ որքանո՞վ է մեր հասարակության համար ընկալելի պահպանողական գաղափարախոսության արժեհամակարգը:

Ընդհանրապես, *մեր հասարակությունը և՛ պահպանողական է, և՛ անընդհատ նորին ձգտող:* Նա հետամուտ է թե՛ իր բուն արժեքների պահպանմանը, թե՛ արդիականացումից ետ չմնալուն, նորը յուրացնելուն:

Սակայն, համաշխարհայնացման (գլոբալացման) արդի գործընթացները լուրջ մարտահրավեր են ազգային ինքնությանը և պետական ինքնիշխանությանը: Միաժամանակ, այսօր աշխարհում, լիբերալ-դեմոկրատական համակարգի ճգնաժամի և սոցիալիստական գաղափարների վարկաբեկման պայմաններում, զգալի վերելք է ապրում պահպանողականությունը:

Այս իմաստով, *պահպանողականությունը գաղափարախոսական հուսալի զենք է ինչպես մեր հոգևոր-մշակութային ինքնատիպությունը պահպանելու, այնպես էլ՝ համաշխարհային զարգացումներից ետ չմնալու առումով:*